ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» հուլիսի 2026թ. N ՄՈ/475 -Ա

ք. Արմավիր

«ԽՈՐՈՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴՈՒՀԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Վարդուհի Ասատրյանի 2026 թվականի հուլիսի 27-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Խորոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդուհի Ասատրյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի օգոստոսի 10-ից 21-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Վարդուհի Ասատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Խորոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Խորոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Գայանե Բաբայանին:
3. «Խորոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Գայանե Բաբայանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի օգոստոսի 10-ից 21-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Վարդուհի Ասատրյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ